պետին անդրդուեկի պնդութեամբ . “ . . . Ո՞ւր գուեր դու ,
” որ թագաւոր մը , որուն կ'ինայ յանցաւորները պատու-
մէլ ըստ իւրոց օրինաց , պարտական ըլլայ Հոռոմ տանել
” տալ պատճապարտ մը , որ ըստ օրինաց գատապարտուած
” է , և երեք ժաղափոյ մէջ՝ իբրեւ հասարակաց խաղաղու-
թեան խոսովիչ դատեալ : . . . Մէկդի թող հրամայելլ-
” մէզ , եւս առաւել զիշխանաբար սպաննալլ , որ ընդ գէմ
” է Գրոց և Աւանդութեանց և Կանոնաց : Ծանօթ է քեզ ,
” և մէք իսկ քաջ գիտեմք , որ անզօք է ամենայն , որ
” այդ կարգերուն դէմ է : Պետքանի առանձնանալու հունիւնը ,
” կ'ըսէ քառ մէծանուն և սրբակօնն նախորդգութ Աւելոն , ոյն
” ապէն լը լուս , յարւած օրինաց արդարութեան կը լինայ :

(*) Στιγματική, συντελεστή, Στα. Ε. Τ. 689

“ Ազգմերդ և քու հրամաններդ արհամարհանօք ընդուշ
“ նիմք” : (*)

Անդրբանս Բ. բարորդին այլօրինակ պատասխանեց
թագաւորին, քան ինչ որ պատասխաներ էր նախքնիցաց
թղթերուն մէջ, նա մանաւանդ իր գրածը մերժեց ըսե-
լով թէ իր կիւռակ եղած ժամանակը իւղակիւրեր էին :

Այսպէս այս պատր, որ առաջններէն մէկը եղաւ
ըսինք Գաղղից ազդային սովորութեանց հակառակող,
վերջապէս աեղի տուաւ այդ ազդին թագաւորին և նոյնա-
կոպասաց հաստատուն և իմաստուն բոլորանացը առջեւ :

Մինչեւ հսկ ընթերցողնց առջեւ դրաներնեւ և ա-
նոնց նմանութենէն որ կարծեմ թէ ունին այժմու կոս-
անողնուավորոց Հայոց վիճին հետ, կրնանք հետեւցունել համարձակ, որ և ոչ մէկ իրաւունք մը ունի Հռովմէ գործ-
նական կերպիւ միջամտիւ ըլլալու Հայոց ազգին այժմու
եկեղեցական բարեկարգ ութեան խնդրոց մէջ, որոնք
ուերա կապով միացած են նոյն ազգին բարձրացին արտօ-
նութեանցը և իրաւանցը հետ, Արեւելքան պատրիար-
քութեանց վիճակին մէջ ըլլալով :

Խ Դ Ի Ր Բ.

Եթէ արդեօք Հռովմէ հիմակուան գտութեան մէջ կրնա օ-
պինակէս իրեն կողմանէ Առաքելական նուիրակ մը դրկել ՚ի Կոս-
տանդնուածիւ, Հայ Արեւելքան կաթովիկ ազգին համար :

Ինչ եկեղեցական և քաղաքական պայմաններ որ ու-
նին Հայերը նկատմամբ Հռովմայ, ամենեւին և ոչ միավ-
իւլք կը տարբերին աւրիշ ամեն արեւելքան ազգերէն :
Թէ որ արեւմասից պատրիարքը չկրնար իրեւու պատրիարք
իշխանաբար և գործնապէս միջամտութիւն բանեցնել

(*) Հինեւմ. Մատենագի. էջ 701 .

արեւելքան պատրիարքութեանց բարեկարգական գործոց
մէջ, — մանաւանդ որ, ինչպէս ցուցուցինք, այնպիսի գոր-
ծոց մէջ՝ ուր և ոչ իրեւու գլուխելի ցւոյ կրնա մոնել,
զի այդ գլուխութիւնը սովոր հաւատոց մասանց, կամ
քրիստոնէական ընդհանուր բարեկարգութեան և բար-

ցից վերաբերեալնիւթոց համար է, — հետեւ աբար ըսեւ
կըլլայ, որ և ոչ զուրիշը կրնա իրեն երեափոխան կարգեւ
տիրաբար գործեցր, և սա առաւ եւ բանական եղանակաւ,
որոնք ՚ի հարկէ կանխառ կանոնական գտառատան մը
կենթագրեն, Ամենայն դարերուն պատմութիւնները կը
սորվեցանեն մեզ, որ Հռովմայ քահանացակետները եր-
բէք մանակից եղած չեն արեւելքան եկեղեցեաց բարե-
կարգական մէճերուն մէջ, թէ և ամենածանր ըլլան,
բայց եթէ այն առեն որ կամ բողոքներավ իրենց տպաւի-
ներ են և կամ գործակցութիւննենին խնդրեր են իրենց
ձեռքը թողով վիճուը :

Եւ եթէ երբեք առանց հրաւիրուելու մէկ կամ ա-
ւելի առաքելական նուիրակներ ալ խրկեցին, որ ծանր
նուգրոց համար եպիսկոպոսաց կամ իշխանոց հետ խօսին,
զայդ եւս միշտ իրեւու միջնորդ հաշտութեան եւ կամ
իրեւու խաղաղաբար կատարած են, և ոչ բնաւ այն իշխա-
նական աստիճան կամ բանութեամբ, զոր իրեւու իրաւունքը
մէպած են քահանացակետներուն երեափոխանները Ա-
րեւելքի մէջ գործածելու, յորին հետէ հոն աեղի ու գ-
զափառ ժողովուրդները աշխարհային և կրօնական յեղա-
փոխութիւններու առակ ընկած են :

Բայց որպէս զի Համարեն թէ առանց օրինակի զայդ-
կըսենք, պատշաճէ քանի մը հատը յիշեցունել հսկ այն
գիսուածներէն, որ ամենածանօթ են և անժխտելի, և
որովք իր է ընդհանուր եկեղեցւոյ պատմութիւնը :

Կոստանդնուալուսոց վիճերուն առենք, Երբոր 381/ն
կայսրն թէ ողու ընդհանուր ժողով մը գումարեց նոյն քաղ-
քին մէջ, որ երկրորդ տիեզերական ժողովը եղաւ, հոն
քննուեցաւ և ոչինչ վճռաւ եցաւ Մարտինոսի ձեռնադրու-
թիւնը, և նոյն աթոռուցն վրայ գրուեցաւ և հաստա-

տուեցաւ սուրբն Գրիգոր Նախանապացին . — Հոն դ արձեալ խօսեցան Անտարայշ հերձաւածքը վերջացունելու վրայ, որուն հայրապետութեան ամռուը գ աստարկի մնացած էր որբայն Մելիտոսի մահութենէն ՚ի վեր, — և Հոն նոյն ժողովցին նու խաղահ բազմեցան կարգաւ Արևելեան եկեղեցւոյն երեք պատրիարքները, սուրբն Մելիտոս Անտարայշ, սուրբն Գրիգոր Կոստանդնուպոլմի, և Տիմոթէս Ավելիտրիոյ, — չեմք գ անեթ ամենեն որ մեկը յանուն Հոռովմայ Քաշ հանացապետին և Արևելեան եկեղեցւոյն հոն ներկաց եւ զած ըլլաց : Եւ ասկայն այդ ժողովցին մեջ, բաց յայլաց ի բաց, նաև ի բարանչիւր վիճակները սահմանուեցան . չե թէ միայն երեք պատրիարքացն Ալեքսանդրիոյ, Անտարայշ և Կոստանդնուպոլմի, այլ նաև Արևելեան պատրիարքին վիճակները, կամ Հոռովմայ Քաշանացապետինը, ինչպէս վերը բանք : Եւ ասկայն այս ժողովին ալ տիեզերական սեպու եցաւ :

Գիտեմ որ Բարսնիս այդ ժողովցին տիեզերական ըլլալը ցուցունելու համար, աւզեց հասասաել որ առապել լավիսն աթուը հոն հաւատայ գաւանս թիւն մը խաւարած էր քանի մը նզովքներով ընդ գէմ արեւելեան ազանդոց, և այդ գաւանութեան վրայ ձեւացան ժողովցին վրա ձիւները : Սակայն անոր այս ենթադրութիւնները շատ գ ժուարութիւններու ենթակայ ըլլալէն զաս, այս ալ դիտելու է որ, ըստած Ճշմարիտ ալ ըլլաց, քահանացապետին խրկածը հաւատոյ դաւանութեան մըն էր սոսկ, և ոչ թէ քարեկարգական կանոնները . և Բարսնիսի առաջ բերել ու զած հետեանքը պէտք չուներ այդպիսի տիկար ասպացուցի, որովհետեւ բաւական է որ ժողովցին վճիռները վերջէն եւ թէ գերապէցն Քահանացապետը և եթէ բոլոր արեւմուեան եկեղեցին հաստատեցին : Եւ յիբաւի իսկ չիայ կանանա գէտ կամ աստուածաբան մը յարեւուտ, մանաւանդ թէ և ոչ կաթողիկեայ եպիսկոպոս մը, որ այդ ժողովը իբրեւ տիեզերական բնդունած ըլլաց :

Ասկէ ի՞նչ կ'ելլէ, բուն թերես ոմանք, — այս որ, կ'աւելցունեմ և ես, արեւելեան եկեղեցիները իբրեւց դոր-

ծերը, նաև հաւատայ վերաբերեաները, կը վճռէին և կը կարգաւորէին առանց ինչ Հառվիայ և իրեն գ եսպան ներան միջամտութեամիր : — Իսկ թէ ուրիշ գէպը երու մէջ միջամտութ եղան, միայն պատուց և գերագահութեան աթուուը նատեցան և Արևոտնենին թէ արեւմտից Պատրիարքին սեփական է, բայց խնդրոց վիճաբանական մասին մէջ ժողովցին ու բիշ հայրապետութեն մէկն ալ աւելի վեր չհամարուեցան: — Այս բանս լու ևս պիտի տեսնեմք վերը, երբոր եղաները պատմելու ըլլամբ :

Սրբ սի Յովհաննու Ասկերերանի մեծոհաչուչուկ վիճին մէջ, որ Եկեղեցւոյն կէոր վեր ՚ի վայր յաւդեց, և որուն իննովկենտիոս Ա. Հոռովմայ Քահանացապետը շատուցուը ընէ ՚ի վեր գիտակ էր, երբ միջամտութ եղան ինդրոյն մէջ: Այն ատեն միայն, երբոր չորս եղիսկոսպատունք յայնը մասնաւոր այս ինդրոյն համար Հոռովմ գ ացին, և քահանացապետին ձեռքը երեք թուղթ տուին, մէկը սուրբ հայրապետէն, միւոր իրեն կղերէն, և երարդը ՚ի քառասուն եղիսկոսպատուց օրոնք որոնք Քահանացապետին միջամտութիւնը կը իրեն դրէին . — այն ատեն միայն, երբոր թէ որանէս և կոստանդնուպոլմցից քահանայն քան և հինգ եպիսկոպոսներէ, խնդրուած սիւնհոգական ժողովց մը թղթերը մատոյց, որոնք գ ու մարտուեր են՝ ՚ի նպաստ հալածեալ հայրապետին . — և գ լուիս բանից, այն ատեն միայն, երբոր հայրապետական վիճակին կղերէն ողջամտագցին մասը իրեն դերագցին միջնորդութիւնն ալ անպատճ եղաւ, սակայն ոչ երեք ոչ Պատր և ոչ անոր գ եսպանները անհնազանդներուն վրայ բռնական իրաւասութեան դորդ մը կատարեցին :

Եւ ակրէսի խնդրոյն մէջ ալ Երբ խառնուեցաւ սուրբը ըլլան էէսն: — Երբոր սուրբն Փատրիանոս պատրիարքը իրեն օգնութիւնը հայցեց, թէպէտ Եւտիրէս գ աստապարտուածէր կոստանդնուպոլմուց գաւառական ժողովցին մէջ, և բողոքած էր Հոռովմայ ժողովցին: Եւ պատմանաց թըլը թոյն մէջ, բաց յայլաց, այսպէս կ'ըսէր սուրբն Փատրիա-

նոու . “ իրեմ քռւ լոկ դատդդ համարէ այս գործը , զօրու
” ցու կայսեր հաւատքը , և դիբքու վճռոցդ կնիքը դա-
” տաղարտութեան մը վրաց , որ արդէն կանանական կեր-
” պի- տրուած է : Համբաւ կայ աւելի բաղմաժիւ ժո-
” զով մը գումարելու . բայց ինչ պէտք է նորոյ ժողովց ,
” որ այս պաշտամներուս մէջ կինայ բոլոր եկեղեցները
” խոսմէն : Այս դատը ուրիշ բանի պէտք չունի , բայց ե-
” թէ քու ազդու ձայնակցութեանի օգնութեանը : Ոյս
խոռոքերուս վրաց կ'երեւայ մեղի խորհրդածէլ , որ
եթէ կաստանդնուազունի պատրիարքը կ'աղաւէր զՊապը որ
այս գործը իբրև իշ- իու տառը համարի , — և ոչ ոչ ինչ իրան-
կը ինդրէր , քուն թէ իր վճռոց կոմիքը՝ կանանական իրան-
վաճառած տապատագութեան ճը կայ առ- եցունէլ , — և կ'իմացու-
նէր , որ այս դատը ուրիշ բանի պէտք չունի , բայց ե-
թէ իրեն ազդու ձայնակցութեանը , — յայտնի եղած կ'ըւ-
լայ , որ սուրբ հայրապետը չէր ճանչնար ի նմաս այն բայց
արձակ իրաւասական գերակայութիւնը , սրուն պաշտօ-
նը չէ պարզապէս իրեմ իւր յատուկ դատը համարէլ գործ
մը , որ պէտք եր իրօր իրեն վերաբերէր իրմւ պատպահան
իրաւասութեան ինդիք , հապա միայն իրեն միջամտու-
թիւնը կը ինդրէր , այնու որ պատրիարքաց մէջ ինքն ա-
ռաջնն ըլլարով գերակացութեամբ Աթոռոց ալ աւելի զօ-
րացած կ'ըւլայ դատաստան մը , որ կանանական իրան- արէն
վաճառած էր , (որ յինքեան օրինուար և վաւեր և ազդու-
րսէլ է , և անկարօտ յետնորդ հաստատութեամբ մը ներ-
քին և էական վաւերականութիւն մը բնուածելու) : Եւ
այս ալ աւելի ըւսուար կերպով մեկնուած է յաջորդ-
խորին մէջ , երբ կ'ըսէ թէ այս դատը ուրիշ բանի պէտք
չունի , բայց եթէ ազդու ձայնակցութեան մը օգնութեան :
— Զայնակցութեան մը միայն կը ինդրէր Պապէն , և այդ ևս
օգնութեան անուամբ :

Նաև երբ Մոնղու Պետրոս զՅուհաննէս Ցելայա Ա-
ղեքանդրից Պատրիարքը ամեռուէն մերժելով անոր իւ-
խանութիւնը յափշտակից և ինքն անոր աւելի անցաւ .
այն ատեն ևս Հռովմաց քահանացապետը միջամտի չէ-

զնու , բայց եթէ երբոր Յայշաննէս իրեն դիմեց սնձամբ
Հռովմէրթալով ինչպէս որ իր մեծանուն նախարդ սուրբն
Աթանաս ըրեր էր : Եւ քահանացապետը իր միջամտու-
թիւնը ոչ եթէ առաքելական ամենիշխան գեռպան մը
Խրիստով կատարեց , որ հոն գտառաւորական հարցափորձի
ատեան բանայ , և դատախազութեամբ կամ ուրիշ իշխա-
նական սաստիւթ զկլերը՝ որ իրեն օրինուար հայրապետին
դէմէրած էր՝ դատաստանի կանչէ , հայրա ամեն բանէ ա-
ռաջ ժողով մը գումարել տուաւ ի Հռովմէր յամին 484 , ի-
տարացից եպիսկոպոսներով , և հասուն խարհրդէ մը ետեւ ,
սորչեց երկու նուիրակ զրիւլ Զենոն կայսեր ի կոստան-
դնուազուխու . գանդատեւու այն աղետակց համար որ Աղեք-
րանից եկեղեցւոյն մէջ առաջ եկած էին օտարամուտ
Մոնղու Պետրոսի բունութիւններէն , և ինդրելու իրմէ
որ այդ ամոռնէն հալածաւի : Քաջ գիտեր ինքն քահա-
նացապետն Փելիքս Բ . որ և է արտաքին բունական գործ
որ կայսերական վիճակին մէջ գործածէր յափշտակող ան-
ձին և իրեն կուսակցացը վրաց , աեւլոյն քաղաքական իշ-
խանութեան իրաւանցը գործած պիտի ըլլար , այն իրաւանց
որավ անբաժանելի վերաբերութիւն հաստատուած է ընդ-
մէջ իշխանին և իրեն հպատակացը : Անոր համար Փելիքս
իր գետպանները կայսեր զրիւց , ձեռուրինին տալոլի իր
ինդրուածոց գիրը , — կայսեր , և ոչ իւր գետպաններուն ,
կ'ըսէմ , յանձնեց այս գործոյն դատաստանական հար-
ցափորձը :

Բայց հոռ փոխանակ ուրիշ դիպուածներու ալ եր-
կայն շարք մը հիւսելու , որպէս զի յայտնի կերպով տես-
նուի թէ ոչ երբէք Հռովմաց քահանացապետուները Աթիւ-
նելու՝ իրենց գեռպաններուն ձեռագր՝ բոնական իրաւ-
սութիւն բանեցուցած էն Աթեւելացի անձանց և ե-
կեղեցեաց վրաց , երբ ինդիրը եկեղեցական մասնաւոր
բարեկարգութեան վրաց է , որ սերոր կապակցութիւն ու-
նի քաղաքական գործոց և նոցն աղդին հին իրաւանցը հետ ,
— աւելի լաւ կ'ըւլայ կարձ կորեւել խոռոքերնիս , և հետեւ-
ցընել , որ և ոչ հիմակուան վիճին մէջ կընար Հռովմէա-

կան աթօռու նու իրակ զրկել ի կստանդնուազիս , վիշակ մը , որ իւրը չէ , — հսն քահանայապետական իշխանութիւնը բանեցանեն լու համոր Հայոց վրայ , որ իւր հըպատակները չեն , — այնպիսի խորեց մը մէջ , որ թէպէտ հոգեւորական է , բայց միանդամյն անփսէլի կերպի կապահագեալ է անոնց ազգային և քաղաքական իրաւանց հետ , մանաւանդ թէ անոնցմէ իսկ օրինաւորապէս յառաջ եկած : Այս ազգային իրաւունքները աւելի լաւ կերպի պիտի բացատրուած են նեն ընթերցագր այն պատասխանն այն մէջ , որ Ը. Խնդրոյն համոր պիտի ասաբ : *

የኢትዮጵያ ዓ.

Թէ առգեսօք սլոյ առաքելական նուիրակը, Հոռոմէն առած
իշխանութեան զօրութեամբը, կարող է նոյն ապդին քահանացից
գէմ բռնական կերպը բանհցունել:

Այս հետազոտութիւնը կրկնակի կերպարանոր կ'ու զեմք մտածել . այսինքն թէ նախ առաքելական նույիրա կը գեր . Անառն Բ. Ելյալցի, կամ ուրիշ ո պը և իցէ , պրց Գահին ընելու հած կարողութեամբքն ունի կամանապկ և իշխանութիւն դատաւորութիւն վարելու կամ ատեան դատաստանի կազմելու օսար Երկրի մէջ . և Երկրորդ , (Ենթադրելով թէ կարող էր) օրէն Եր իրեն բանառո րապէ մտածելով բահանայից վրայ բռնանալ և բանա կան միջցնելը բանեցանելը , արդիւելով որ իրենց համար գային աշխարհականաց հետ չոգեւորական հաղորդա կցութիւն ընեն , մինչդեռ Երկուքն ալ ոչ չուովհեական պետութեան հարատակներ են , և ոչ չուովհայ վերաբե րեալ միճակի բնակիչներ :

Զայս նախագահակերպի չեղը ընդունիր , որ այդ առաջ քելական նույնական չուղման ընկալեալ իշխանութիւնները կարող ըլլար կանոնադրեա դատաւորութիւն վարել կոստանդնուպօլիսի Հայոց վրայ : Ապաքէն , թէ որ Պապը , ոչ իբրեւ գերակայն քահանայապետ , որովհետեւ հոգ ու զբաժան

Հաւատաց կամ վարուց խնդիր չէ որ կը յուզի, և ոչ իբրև
Արեւմտից պատրիարք, չկննար ամեննեւին իր վրան առ-
նուլ, և ոչ իր անուամբը ուղիշի առնուլ տալ իշխանական
կամ բռնական միջամտութիւն մը (Խոր. Ա. և Բ) Արեւել-
եաց վրայ, որ եթէ անհասարար և եթէ վիճակաբար՝
Արեւելեան մեծամեծ պատրիարքութեանց կը վերաբերին,
— ուրեմն և ոչ իր որ եւ իցէ նուիրակը կրնաց հանոնալիս ի-
րաւունքը մը բանեցանել, որ չունի. վասն զի, ըստ ամենա-
բացաց և հասարակ կանոնաց, եթէ եկեղեցական և ե-
թէ քաղաքային իրաւագիտութեան, գործականարի մը
իշխանութիւնը չկննար իրեն հրամացվին իշխանութիւ-
նէն աւելի ըլլալ: Դատաստանական հարցափորձ կազմելլ՝
գործ է իշխանութեան. չկննար բանեցաւնել զայն դատա-
ւոր մը՝ օսար հպատակացը վրայ, և ոչ օսարին երկրի
մէջ. այնպէս որ այդպիսի դատաւորի մը վճիռը որ իրեն
չվերաբերած նիւթայ մը մէջ անձին մը վրայ կուտայ, օրի-
նապէս ամեննեւին անզօր է. — այդպէս կը վարդպապետեն
եթէ իրաւագրոց իջ կանոնը (Գլ. Բ. ի Զ. Գիր.) որ
կըսէ “ունիւն ե այն գործը որ իրեն իրաւագութեանը չէլլարիւրած՝
իւ խոպան բարակուր ըլ ”, և եթէ (Գլ. զիրաբեալ ձէ՛, յօ՛, զկանոն.՝
իւսու. . , և գարձեալ Գիրք, վեշին յօ՛. լիրուաբնութեան),
ուր կը կարգամբ թէ, “ գործ ըլ բարակուր ծը խարութած, ” որ
եւ պաշտօնի բարակ է, անզօր է ”: — Այս կանոնը աւելի
յացանի կերպիւ բացարած է բազմահմատ կանոնակէտն
բայց քէնդուել (կանոնական իրաւունք, հապ. Գ. էջ 49. գոյ.՝
Դ. Հունվ 1834.,) ուր կըսէ “ այն ամենայն զոր դատաւոր
մը կը գործէ իր կարգութեանէն և իրեն արուած իրաւ-
ասութեան սահմաննեն դուրս կամ իրաւագրոց պատուիրած
ձեւնն հակառակ, ոչ ինչ է և անզօր ”: — վասն զի, կըսէ,
ամենայն զօրութիւն և ամենացն կարգութիւն զոր դատաւ-
որ մը կը վարէ՝ հիմնեալ են հասարակաց իշխանութեան
և իրաւասութեան վրայ, զոր ունի. ապա ուրեմն երբ
այս հիմը կը պակիի, հարկաւարաբար կը պակիի նաև ա-
նոր գործոց վաւերականութիւնը : Այսու կը միաբանի նա-
եւ մէնիւն ի բանն, յօ՛, պիրաւունն, բնավ. Գլ. առեւու Ժ. և ա-

Ուրեմն ըստ այդմ կանոնական վարդապետութեանց եղարկացաւնելու է, որ Գեր. Բիբյալմ առաքելական նուի բակը չուներ օրինաւորապէս ամենենին իշխանութիւն հարեափորձ ընելու այն նիւթյոն մէջ որուն վրայ է մեր խօսքը:

Եւ երկրորդ, եթէ նաև անընդունելի ենթագրութեամբ, համարենք ալ թէ ունենար այդ հարցափորձի իշխանութիւնը, իրեն օրէն չէր վճռելու, որուն հետեւ անկնելը արտաքին ատենի վերաբերեալ հասարակոց գործեր են. վասն զի այնպիսի յարաքերութիւններու կը դպւէր, որնցմանվ ժաղավրդեան բազմութիւնը (որ նցյա գատառորին հապատակութենէն օտար էր), կազակութիւննենին նցյան վճռէն գատառարուու ածներուն հետ, (որ նցյագէս անոնք ալնոյն գատառորին իրաւասութենէն օտար էին):

Յաց ասէլ, համարելով ալ թէ Գեր. Բիբյալմ կարենար օրինաւոր երեսփառան սեպուիլ ատենան բանալու և վրձիս տարու, ուզիլ կարդը կը պահանջէր որ խնամքով քըննէ և իմանայ այն պատճառները, յորոց գրգռուած էին ուղղափառ ժողովրդեան մեծագոյն մասը իրենց եպիսկոպութիւնում (որուն օրինաւոր կամ ապօրինաւոր ըլլալը յետց պիտի քննէմք), մասու իշխանութենէն իրենք զի բնոնք ապաս բներու համար, և հետեւաքար պէտք էր որ ախանջ կախէր անոնց պատճառներուն, և բազդատիք զաշնոնք այդ մերժեալ եպիսկոպութիւն կամ առկաւաթիւն պաշտոնավերուն յառաջ բերած փասութուն հետ, կամ լուեւու, անոր իւր անձին ըրած արդարացուցմանը հետ, քննել երկուց կողմանց վլայութիւնները, և մերջապէս ըստ ուղիղ կարգի դատաւորութեան՝ տալ այն վճիռը, որ ցուցունէր թէ արդարախոչութիւնը, անկողմնափութիւնը, մոտաց իւրջը թելագրեր են իրեն, և ոչ թէ մէկուն կամ մէկալին ազգեցութիւնը կամ հրապուրը:

Յաց ինքը ասոնցմէ և ոչ մէկը կատարեց: Մէկի թողուց եղած բաներուն նախնական և գլխաւոր պատճառը, և դարձուց իր զինքերը այն կլէրին դէմ, որ իւրջը մոտանաց պարոք համարեցաւ զարացեալ ժողովուրդ մը

աւելի քան զեօթն հազար հոգւոց՝ անտերունչ ինքն իր ձեռնը չժողովու, զաւրկ հոգւեւորական միսիթարութենէ. Ենդգէմ այդ կղերին, որ առանց ինչ օրինաւորութեան կամ արդարութեան, տգիսանալով կամ մուտալով Առաքելոցն այն խրամը որ կ'ըսէր թէ գուալանս՝ ելեւ գուալանս՝ վէտ որ Գաման վէտ էր վահամիշ խորհրդով, բռնաւորական ոգւով, և անսնց զայրացմամբը թելսդը բեալ, ոքը խրկեր էին զինքը, ուստի և սցդպիսի վճիռ մը ինքն յինքեան ամեննեւին ոչինչ է կամանապէս :

Ազգաբէն իմաստութիւնն ալ կը սորինցունէ, սրբազն կամանագիտաց տուած խրամուցը համաձայն, թէ պէտք է որ դատաւորը հասուն մտօր և ամենայն խնամօք քննէ վէճերը, և ամենայն կերպիւ զգուշանաց որ ըլլալը թէ աճապարանօր և գահամիթաբար վճիռ կորէ: (Գլ. Յորժամ ի Գրոց, Ե. Յ. Յանձնականի հարացոյ, Քայլֆիքէն. Կոնդակ, Գլ. 41):

Առաքելուկան նու իրակաց կրայ առանձինն խօսելով իրաւագրոց կանոնները՝ կը սորինցունեն մեղ, թէ Պապին նու իրակը պէտք է ունինդիր ըլլաց հարկաւոր ապացոյներուն և օրինաւոր ջատագովութեանց, և զգուշաւոր արդարափութեամբ դատաստանը կատարէ: Համաձայն իրաւագրոց կանոննագրութեանցը: (Գլ. Ամենին որ Լոր ի կարգին, 2, 6, 9, — Գլ. Զապահանն, ինդ. Ժլ. Զլլութը. — Գլ. Ի Դաշնակ, 13. Եւայլ: — Քայլֆիքէն. Կոնդակ. Գլ. Ա. Պիտը իմ. 101): Մահաւանդ թէ ուր տեսնուի որ դատաւորը սոկ գործոց երեւութիւննայելով՝ կամ մից կողման թելսդրութեանը միայն ականջ կախելով իր վճիռը տուած է, յանդգնութիւն չէ համարելը, թէ այդ վճիռը նցյան իսկ յիրաւանց ոչինչ է. վասն զի առանց դատին ծանօթը ըլլալու տրուած է. (Պարդոփինի, ի Գիրս Յանձնականի բերեալ. Գլ. Զլլուցոց և զլուցանը. ամենայն դաս: — Առբաս, Գլ. Արդ Եւս, իմ. համար 5. Պարտութեան, և Գլ. Յորժամ ի Գրոց, համար 6 Եւայլ: — Քայլֆիքէն. անդ. 42):

Սակայն բաց աստի այս խներոցս մէջ գործերը յայտնապէս կը ցուցնեն, թէ այդ որոշումը Գեր. Բիբյալմին չուովմէն մեկնելին շատ առաջ սահմանեալ և կարդարեւալ էր:

Հառվմ, կամ Բրոբականստայն չէր կրնար մօացած ըւլ
լալ այն առենական հարցաքննութիւնը, զոր 1852 ին կուշ
տանդնութուրոց Առաքելական փախանորդն Գեր . Այլոյ
տոն Գանսպար Վաշչինոյ լատինքահանային համար բացաւ,
որուն վրայ ամբաստանութիւն կար թէ նիքն ալ մատն ու
նեցած ըլլաց Միլիարեանն պրին . Դաշլրու Վենետիկի անուսանեալ
չարամատենին չարագրաւթեանը մէջ, այդ առենական քրին
նութենին օրինաւորապէս յայտնի եղաւ . Ճշմարտութիւնը,
որ ինքն իսկ նախագահն Գեր, Անոսն Հասուն՝ սկզբնակատ
ձառ և հեղինակ և վարդաստրով եղած էր այդ գրուածքին
— հանդերձ գործակցութեամբ թիւն քահանաներուն, որ
են Պողոս Մալաքեան, Յովաննէս Հոլաս, և Ստեփան Ալար
եան . Անոր համար նաեւ հիմակուան բրդած փոթորկին
մէջ ուրիշ փախատեայ ճամբայ չէր կրնար գտնել, բայց
եթէ խուասիել որ և իցե գառասասանական վիճաբանու
թենէ, աղէ և գուշակելով որ եթէ վէճ յուղուելու ըլլաց,
բոլորամին մէջ տեղ պիտի ելլին, որ եզր ջրայն երեսը այն
պէս չելլիր, ափացանագետ Գեր . Հասունին և իրեն ըն
կերներուն և պաշտպաններուն բազմադիմի անբրաւու
թիւնները . Պատերազմն մարտահնար ճամբաներն արդէն
յօրինուած և պատրաստուած էին . վասն զի ոչ Ճշմար
տութեան յաղթութիւնը, և ոչ Յիսուսի Քրիստոսի սիրոցն
կապով հաշտութիւնը կը մինուէին, այլ այնչափ տարիներէ
ի վեր ի ծածուկ աշխատեալ չարարուեսաւ հնարագիտու
թեանց յաջողութիւնը՝ ի վեաս Հայոց ազգին ազատու
թեանը և իրաւացը, և ի կատարեալ յափշտակութիւն
անոնց, Բրոբականստայի և Պապին օտարասեւ հպատակու
թեան տակ ձգելով զանոնիք . Կ'աւզէին կը բը ժողովրդէն
դատել, որպէս զի ասիկայ գրեթէ յանհնարս մանելով,
խոնորհի և իր հոգեւորական միմիթարութիւնը բնտառէ,
կամ Առաքելական նուիրակին միջնորդութիւնը ինորով,
կամ Հառվմաց զըստելի տիբապետութեան լծոյն և գերու
թեանը անձնատառը ըլլալով, — խորհուրդ՝ որ գուռողն Հո
ղեգեռնէսի խոլոքրդէն չէր տարբերել, որ անտարակոււ
սելի կը կարծէր թետիզուայի առումը, երբոր յաջապէր

Ջրերուն աղբեւրները բոնել, որ քաղաքին մէջ կը վաղցու
նէին . — Սակայն մորէն չանցուց բնաւ որ Երկայրութանութեանը
կրնար դիւրաւ Եռապարհանութեան փոխութիւն ոչ անհաւանա
կան պարագայով մը, այսինքն արեւելեան Հայ կամուիկ
նէրը Աղդին մասնչի մը զզուելի գերութեան լծոյն տակ
մանելու տեղ, աւելի վերադարձին միաբանիլ այն Հայոց
հետ, զորս Բրոբականստայի գործակալուց կեզծաւորու
թիւնը և տդիսութիւնը սպազու են Անբյուածուկոչել :

Հակասակ օրինաց ուրեմն ոէտ եմբ կոչել այն մի
ջամտութիւնը, զոր Առաքելական նուուիրակը այս վէճին մէջ
ըրաւ, Հառվմէն ընդունած իշխանութեանց գորութեամբը՝
կրկնակի հակասակ օրինաց, եթէ կերպին և եթէ ամեն
այցայնի կուսակցութեանը համար, զոր գատաստանին
մէջ գործածեց, թէ և իրաւասութիւն ունենար:

Նցն իսկ տուած վճռայն ձեւէն, — որ բովանդակ
հիմնեալ է Արեւելեան բարեկարգութեան վերաբերեալ
ինդրոյ մը մէջ, ի կորուսա Արեւելեան իրաւանց՝ Արեւ
մտեաններուն յացտրածակ իրաւասութիւն բանեցունել
Արեւելեաններուն վրայ, զոր քիչ մը վէրը հերքեցինք, —
այն ձեւէն, որուն ամեն մէկ առզը աւետարանական սիւ
րոյն կարկատուն ցնցութեամբ ալ չէր կը բէր ինքը զիքինքը
պարտել և իր նէրին դաւանութեան շունչը զապել, —
նցն իսկ ձեւէն ալ, կ'սեմ, յայտնի կ'երեւայ, որ եղած
գործը ոչինչ է և ապօրինաւոր :

Խ Ն Գ Ի Բ Պ .

Եթէ արդեօք այդ Հայազգի քահանաները պարտական են այդ
Առաքելական նուիրակին հրամայելոցը հնազանդիլ և իրենց գէմ
տուած խափանման վճռայն գլուխ խոնարհեցունել :

Հնազանդութեան պարաւորութիւնը հրամայելու իւ
րաւանց հետեւանքն է, այն օրինական յարաբերութեամբք

որ կայ անոր մէջ որ կը հրամացէ, և անոր՝ օրուն հրաման
կը տրուի : Աւստի յայտ է, թէ ով որ հրամացելու իրա-
ւունքը ունի մէկու մը, ունինաեւ իրաւունքը անկէ հնա-
զանիրութիւն պահանջելու . ինչպէս որ նաեւ ի հակա-
ռակին յայտ է, որ ոչ ոք պարտական է հնազանդելու-
անոր, որ իրաւունքը չունի իրեն հրամացելու :

Նախընթաց իննդիբները պարզաբանելու ատեն, ցուցույնինք որ իննդիբները որովհետեւ Արևելիսան Ազգի մը սկիզբան բարեկարգութեան օրինաց իննդիբնը մընէ, որ նոյն աղջկին քաղաքական իրաւանցը հետ անբաժանելի կապակցութիւն ունի, ուստի ոչ Գեր, Բիբիյմ գործակալը, և ոչ զանիկայ զրկող Պիտո Թ. ամեննեին գատաւորական իշխանութիւն չունին այս ներկայ գործից մէջ։ Ցուցույնինք դարձեալ, որ թէ և անընդունելի ենթադրութեամբ համարիմք որ յիշեալ գործակալը օրինաւորութեամբ զրկված ըլլայ, սակայն իւր գատաւորութեան պահանջած ըզդ գուշութեանց պայմանները կատարած ըրլլալուն համար, ըրած գատաւատանն ալ ներքսապէս անզօր կը մնայ և ոչ մին։

իսկ արդ իրաւագրոց նք. կանոնը մեզի կը սորվեցու-
նէ, թէ անզօր է և ամենայն հեղինակութենէ զուրկ այն
ամենայն, որ ինքն ըստ ինքեան ոչինչ է (*) — Ապա ուրե-
մըն Գեր - Քիվալմի տուած խափանման վճիռն ալ ընդդէմ
երեսուն և ութ քահանայից, որոնք հաստատուն կեցան ի-
րենց աղքին հոգեւորաց մասակարարութեանը մէջ, չըր-
նար ամենեին վրանին օրինական արդիւնք մը ունենալ,
— ոչ պարտաւորելով զնոսա կամ հարկաւորելով հնազան-
գելու, եթէ իրենց պաշտօնեներէն եւո քաշուելով, և զիեր.
Հասունը իրենց գարձեալ պատրիարք ձանչնալով, և թէ ի-
րենց հոգեւոր պաշտամունքները կատարելէն գաղթելով,
իբրև թէ օրինաւորապէս խափանուած ուրացին :

(*) Որ ինչ ոչ ինչ է, ոչ ինչ կարէ ածել արդիւն :

የኢትዮጵያ

Նթէ արդեօք Քեր . Բիւլիւմի խախանման վճռովը յիրաւի արգիլուած կըլլամն ալդ քահանաները իրենց Ազգին հաւատացելոց հոգեւորաց մատակարարութենին , — այնպէս որ ալ ամկէ վերջը անոնց պաշտամած խորհուրդները ոչչինչ եւ անվաեր ըլլան , — եւ թէ իրենք ալ պաշտելով զանոնք՝ առաջանաւուեւան մէջ ընկած րյան :

Յասուածայնոց խափանումը եկեղեցական պատիժ
մըն է . այդ պատճավ զարնուած անձը՝ կը խափանուի իրեն
սրբազն կարգին սահմանեալ պաշտամունքը կատարելին
և ստացած իրաւասութենէն : (Տէ լողի , կանոն . իրաւ . Գիրք
ԺԷ . պիտու . ի . յօդ . Ա .) :

Այս պատիմքը տալու իշխանութիւնը միայն օրինաւոր
մեծին է՝ իր յատուկ հսկատակացը վրաց, (անդ. յօր. Դ.)
և այն ալ մահացու յանցանաց համար, որ արտաքին կեր-
պիս և ընթառապութեամբ կատարուած ըլլան եկեղեցական
իշխանութեան պատուիրանաց գեմ, (Բանաբ. իանոն, Աշ ոչ յշ-
տիսկազմաց, Լթ. իանոն, Աշ ոչ, Խ. դապ. ՓԱ. ինչպ. Ե.) իսկ պա-
տիմքը տալուն առաջ հարկ է կանոնական գատաստան ընել,
(Յշ. ՀՀ- Բանաբը. ԳԼ. Ա. ի Զ. Գիրսն, անոր յեւ-ը ըստ ան-
ձին աղջապարհութեան) գրով. (անդ.):

Եթէ այս պայմաններէն մէկը պակսելու ըլլայ, հրամայեալ իսականութը ոչ երբէք պատժահարեալ անձին վրաց ազգեցութիւն կ'ունենայ. — Արդ մէր դէպքին գալով ոչ թէ միայն մէկը, հասպա ացդ նշանակեալ պայմաններէն ամենն ալ կը պակսին: — Եւ, միրաւի կը պակսին,

Ա. Խափանումն հրամայովին իշխանութեալ, և զայն ցուցինք վերը Գ. Խնդրում մէջ :

Բ . Մ ա ն ա յ ո ւ յ ա ն ա յ ո ւ յ ա ն մ ը , ա ր դ ա ս ի ն ի կ ե ր պ ո ւ ն ը բ ո ս պ ո ւ լ ե ա մ ը
ի ս պ ա ր ո ւ ա ծ ե լ ե լ լ յ ա յ ա ն ի ւ լ ի ս ա ն ո ւ լ ե ա ն պ ա ր ո ւ լ ր ա ի մ ը է է մ . վ ա ս ո ւ զ ի
ո չ ե ր բ է ք կ ր ն ա յ ն ա ն ա յ ո ւ յ ա ն ս ե պ ո ւ ի ւ լ ո չ ա յ ն ք ր ի ս ո ւ ն ե ա
ա կ ա ն ս է ը ը , ո ր բ ա ր կ ո ւ թ ե ա մ ք ք օ ր ք օ ր ք ե ա լ ժ ո ղ վ լ ո ւ ր գ մ ը
ե տ կ ը կ ե ց ո ւ ն է ք ս պ ա ն ն ա յ ե ա լ խ ա ր հ ր դ է մ ը , ո ր գ ա հ ա

վիմելով պիտի գիմէր, եթէ ինքը զինքը իր կղերէն թաղուած աեւնէր, — և ոչ այն ազգային իրաւանց պահպանութեան պարտաւորեալ սէրը, որով կը փափաքի ետ դարձունել մասնուած իրաւունքը, որուն բռնաբարուելուն պատճառաւ այդ կրակը բռնկեցաւ, և քանի և հինգ տարուքնէ ի վեր անդադար արծարծելու հետ էր, քանի որ կը տեսնէր ժողովուրդը որ իր բռոքները և տրաւուջները անօգուտ կ'ելլին անոր առջեւ, որ իրեն շահ համարած էր անոնց մտիկ չընելը: — Խոկ թէ դարձեալ չափազանց անհանձարութեամբ ու զենոց մէ կը նահացոյ յանցնէն համարի այդ պագասիրական ընածնն զբացումը, բայց գէլթը բնաւ երբէք չկրնար ցուցունեւ թէտ ատիկայ Եվրոպական իշխանութեան պատրուիրանինը Եկեմ յանցնան ճռն է. վանի զի Արեւելիքան ազգայ համար Եվրոպական իշխանութեան օրինաւոր և անզարտելի իրենց Եկեղեցական կարգաց ազգային արտօնութիւններն են, իրենց հին Հայրերէն սկզբնաւորեալ, երկան դարերու կանոններով հաստատեալ, և իրեւելական նշան ճանչցուած իրենց իւրաքանչիւր Եկեղեցեացը: — Եւ ոչ ալ այս Հայ Արեւելեան կաթոլիկ ըսուած ժողովուրդը, որ զայրացեալ է նորութիւններուն դէմ, Գեր. Հասունի բռնութեամբ և Հռովմայ Բրոբականասայի բռնաւորական աշակցութեամբը մուծեալ, — այն ժողովուրդը որ կը մերժէ և չուզեր այլ եւս ճանչնալ զայն որ հովուական զգեստուն ատկ ճշմարիտ գայլ եղաւ, — ոչ թէ չափ ճռնինքն էն (ինչպէս անամօթութեամբ մէկլմէկէ օրինակելով յանդգնեցան հրաւարակել Եւրոպից Կաթոլիկ անուամբ պարծեցեալ օրագիրները, որոնք փարիսական մարդելուութեամբ Հռովմական քմացը ծառացելով, իրենց այլակերպ կամ գէլթ առաւելազանց պատմութիւններով՝ ձեռնտու կ'ըլլան օր յօրէ Արեւելքի մէջ կաթոռի կիութիւնը տփարացունելու), և ոչ ալ չըս կնադ սրբանին էն, (ինչպէս որ Բրոբականասայի ամենավեմաշուր վերատեսուչը իրեն բրոբակեալ կատազութեանը մէկ վայրէնին Հայ Եպիսկոպոսի մը ըսէր է), այլ են երկու հազարէն աւելի ընտանիք, որ առ նուազն տասն հազար հա-

գի կը համբեն, և այս ընտանեաց մէջն են Ազգին ամենէն ճոխ և հզօր և նշանաւոր գերդաստանները. մինչդեռ ապօրինաւորութեան, բռնութեան և հակազգայնութեան կուսակիցները, որ Հասունին յարեալ են՝ հազիւ եօթանասուն ընտանիք կը համարուին, և ասոնք ալ բաց ի մէկ քանիկն, ու ամիկ խաժամուժ և ողորմելի ամբոխ մը, զար դիւրին է ստակոլ որսալ և ամենայն արծաթաշանառ ձեռնարկութեանց պլըշտըկէլ:

Բայց անցնինք մենք յառաջ:

Գ. Կանոնական դպրասպան ալ կը պակսի, և զայդ Հաւասուեցինք Գ. Խնդիրը հետախուզելու ատեն: — Եւ արդարեւ ուր են ատոր ատենական քննութեանց գործերը, . . . ուր են ամեն մէկ ամբաստաններց կոչումը յատեան, և անոնց պատասխանները . . . և Երկուքն ալ ի գէլ:

Դ. Իր պակսի ըստ այնին աղբարարութեանը, որ և Գրասուպիտիսի, բայց Եթէ համարելու եմք այն ապօրինաւոր հրավարակը, որ Արեւելիքան կաթոլիկ Հայոց սուրբ Յամիչան Ուկեբերան Եկեղեցւոյն դրսի պատերուն վայց կուռով մը փակուցնի, — դաշոյնով զինեալ չորս սրիկան, Վնիկւրից խոռովար Եպիսկոպոսին ծախիւրը զրբկուած, արժանի փոխանորդ փռնուուած Հասուն պատրիարքին, (ինչպէս որ նոյն սրիկաներն խոստվանեցան ու տիկանութեան գլխաւորին առջեւ), — ապրիլի Յին կիրակի օրով, (*) (արիշ պարագայ մը ապօրինաւորութեան տօնական սուրբը օր Ալլալուն), — ձայնաւոր պատարագի ժամանակի, — ի խոռովութիւն և ի գայթթագլութիւն հօն աեղը գումարուած բազմաթիւ ժողովուկեան:

Առդ թէ որ հասարակաց իրաւանց սկզբունքները, թէ բազմաբացին և թէ կանոնական, կը սորմեցունեն թէ գործոյ մը թերութիւնները՝ որովք գործ մը իւրեւ չեղած կ'ըլլաց:

(*) Կը վիրափի մատենագիրս, փոխանակ ըսելու փետրուարի 2 ին (ըստ հին տօմ). Տեսանինդապաշչի տօնին օրը, եւ կը մուսանաց նաեւ յիշել երկու հարիւր սուբինաւոր վինսուորներու Եկեղեցւոյն դուռը բռնելը. Ճանձէլ. Բարդ:

պատճառ կ'ըլլան նոյն գործոյն օրինական ոչնչութիւնը է ապէս հաստատելու, և թէ այս թերութիւնները, եթէ գործոյն արտաքին պայմանաց պահան թենէն առաջ եկած ըլլան, եթէ նոյն խոկ գործոյն ներքին դյացական պակե սութենէն, զետքը բառ ինքեան ոչինչ կ'ընէն, և իրեւ թէ ամենեւին խոկ երբէք չեղած, — ուրեմն դեր, թիւյիմին երեսուն և ութ քահանացից դէմ տուած խա փանման վճիռը, որուն վրայ է խօսքերնիս, — թերի ըլլա լով եթէ ըստ արտաքին պայմանացը և եթէ բառ ներքին դյացութեանը, մերոյիշեալ պահասութեանց պատճառաւ, — չէր կրնար այդ երեսուն և ութ քահանաները զրկել իրենց հաւատացեալ ժողովորեան պաշտած հոգեւ որպական մատակարարութենէն, և հետեւաբար՝ չկրնար ոչնչացունեւ այն խորհրդոց զօրութիւնը, որ ընդդէմ իւր արդելմանը կը կատարեն, և ոչ խոկ ինքեանք քահանայքն, կատարելով զամնոր, անկանոնութեան մէջ ընկած կ'ըլլան։

Խափանման վճիռը յառաջ բերաւած պատճառներով ներքսապէս ոչինչ եղաւ, գործ մը եղաւ կ'ըսեմ, որ բացարձակապէս զուրկէ և ո՛ր և է կանոնական խոկութինէ, — ուրեմն ըստ ԾԲ. կանոնաց իրաւագրոց, զեր ի վեր անդք յիշեցնիք, թէ ոչինչ խարէ ածել արդինա, այսինքն թէ ամեննեն զօրութիւն մը չընէի, — զբութիւն իւլունի՝ թէ զրկելով այն երեսուն և ութ քահանաները իրենց կարգեն և իրաւասութեանը կարսութենէն, — զբութիւն իւլունի՝ թէ ոչինչ համարելով ատանց այդ կրկնակի իշխանութեամբը կատարած գործերը, — և զբութիւն իւլունի՝ թէ պատճելով զամնոր անկանոնութեամբ՝ իրենց հոգեւորական մատակարարութիւնները յառաջ վարելիսուն համար։

Մանաւանդ թէ այս վերջնոյն, այսինքն անկանոնութեան նկատմամբ, պրազան կանոնագէտք կ'ուսուցաննեն մեղ թէ անկանոնութեան մէջ չինար ով յայանի կերպիւ կը ճանչնայ իրեն արուած դատավճառոյն ոչինչ ըլլալը (բերհինկ. ԶԵպավագոյ, ԽՊ. և այլք), վասն զի պէտք չէ կանոնական պատճեց տակ ինայ անիկայ, որուն որ բառուած դատավճառութիւնները կ'ըստ արտաքին պահանայքն, այս պահանայքն անիկան եղած չէ։

— և թէ, ինչպէս որ այդ վճիռը ոչինչ ըլլալը՝ օրինաւորական ազգեցութենէ զուրկ կը մնայ, ասանկ զուրկ կը մնայ եթէ հեղինակութենէ և եթէ դատաստանական դործը ըստ ելէն, այնպէս որ արքանի չէ որ և ոչ վճուց անունը կը հասարակաց կարծեաց մէջ կոմը ժողովրդեան բերանը: — Այս ամենայն ըստած է ի կղեմ. ԳԼ. Բ. ԶԵպավագոյ յօդ. Զի վասնորոյ, և անդ ԳԼ. Պ. Զիրաց բար. յօդ. ԶԵպավագութեան։

Սակայն այժմեան վէճին մէջ տարակոյս մը միայն կը մնայ ծնանիկ իրաւասական դործոց վաւերականութեան նկատմամբ, ինչպիսի է խոստավանութեան խորհրդոց մատակարարութիւնը: Այսոյ է որ Ղատին եկեղեցւոյ մէջ, Տըրիտենդեան ժողովոյն ատենէն որոշուեցաւ (Կիպ ԽՊ. ԳԼ. ԺՆ. ՅՆ. Նորայիւն.) որ արձակման կարողութիւնը, դորքահանցք ձեռնադրութեան ժամանակ կ'ընդունին աստուածային օրէնտրութեամբ, կարենաց իրենցը վերցուիլ և չափաւորուիլ ըստ իրենց տեղական և պիտիկովորին համութեանը և հրամանին, ամենեւելն ընջուելով նաև ամենայն արտօնութիւններ և որ և իշեց անյիշատակի ժամանակէ ի վեր ստացեալ ավլորութիւնները: Բայց ոչ այդ որի և Ավեւելեան եկեղեցեաց մէջ, որոց խւրաքանչիւրը նաև յայած մասին իրեն հնաւանդ սովորութիւնը, առելի կամ նուազ ընդարձակութեամբ, անփափոխ պահեց: Անոր համար, յետ միանդամ եպիսկոպոսն այս խորհրդոց իշխանութիւնը ընդունելու, որով եպիսկոպոսը իր իրաւասութեամբը կը հաստատէ քահանայքն՝ ձեռնադրութեամբ արուած՝ այս աստածածային իշխանութիւնը, կը ընաց այնուհետեւ քահանայն՝ առանց ինչ պայմանի տեղ ոց կամ ժամանակի բովանդակ թեմին մէջ ամեն տեղ գործած ձեւ պայն:

Այս է Արեւելեան այլ և այլ ազգաց բնդէանուը սովորութիւնը, և ամենեւելն չգիտեմբ սուռ զիւ, որ Տըրիտենդեան ժողովոյն այդ բարեկարգական կանոնը, ինչպէս ի գաղղիա վաթառն տարի վերջը, ի 1625, ի 1635, և ի 1645, եկեղեցական ընդհանուր համարութիւնը մէջ

բացցայսու կերպով ընդունելի եղաւ ռասանկ ալ յԱքեւել լըս եղած ըլլայ :

Հասանդ նաւազուայ և չայոց ու թիշ կազմանց թէմերուն մէջ, ու ը Հասունի և իրեն աշակերտելոց վլրեւելս լատինացունելու մոլեգնութիւնը՝ վեր ի վայր յեղաշըն էր ազգային սովորութիւնները, աեզզ հաստատելու համար Հռովմէական սովորութիւնները, եկեղեցիք և կղերը տառականնե և անկարգ պայմանի մը մէջ կը գտնուելին : Եւ զազդը լատինացունելու բացարձակ կամացը մէջ, գոնէ Արեւմուեան եկեղեցւոյն բարեկարգութիւնները ամբողջապէս հոն մտուցած ըլլային : — Զէ, ամենայն ինչ բառ գէր . Հասունի քմացը կը կատարուէր : Անոր համար չկար հոն ոչ կանոնական կազմութիւնութողփափետութեանց, ոչ կանոնական կարգագրութիւն ժողովրդապէտոց, որոց հազիւ երեք տարուան միայն իրաւասութիւն կը չնորհէր, և ոչ ալ խոստավանահարց կայուն միհամի մը կը սահմանէր, իրենց իշխանութիւնը մէկ ատրուընէ անդին չթողլ անցնիկ :

Այս իշխանութիւնները այս օրուան օրս դադրած պիտի ըլլային, երբ գեր . Հասունին մտուցած ինքնակամ կանոններուն վրայ երթային, հակառակ Արեւելեան եւ կեղեցեաց կանոնացը, որոնք գարուց սովորութեամբը վաւերացեալ են, Տրիսենդեան ժողովրդապէտութեանց, եթէ յառաջ և ամենայայնին ներհակութեան մէջ, ո՞րը արդեօք բառ բանաւոր մտուց պէտք է նախամեծար սեպուի. մէկու մը անձնահաճոյ կամքը, թէ գարուց սովորութիւնը :

Եթէ կամց և եթէ ակամց, այս օրուան օրս եղած ծըն այս է որ երեսուն և ութ քահանայք գեր . Հասունին միանկամ իրաւասութիւն ընդունած ըլլալով, և մինչեւ ցայսօր այդ իրաւասութիւնը պահերաժնին, իրենց եկեղեցւոյն բարեկարգութեան կանոնացը համաձայն ընթացած են : Ինը մինչեւ առի մը սահման դրած էր, ասկայն այդու միքն իւր անձնին Արեւելեան եկեղեցեաց սովորութեանը մը դրաւել

ուզած էր, միայն իրեն բնածին ոգին գրգեալ որ ամենայնի և ամենեցուն իշխու : — Բայց ինչպէս որ ալ ըլլայ, որպէս զի խզէերնին ամէն վախէ ապաս ըլլան, և իրաւասափան պակասութիւն մը ամենենին չունենալուն վըրայ վասահ, որով և իրենց արձակման վաւերականութիւնը անկամածէրի, բաւական է, ինչպէս ինձի կը թրւի, և այդի թէ համաձայն կը գտնուին իրենց եկեղեցւոյն կանոնական սպասութիւնացը : Հայք են, ուրիմ բանագուստած չեն լատինական նորահատուատ բարեկարգութեան մը պահպանութեանը, և ոչ ալ ուրիշ ասոր նման շատ մը Տրիսենդեան կանոնադրութիւններու, պանք երբեք ընդունելի եղած չեն Արեւելեան եկեղեցեաց մէջ :

Այս բանիս վրայ աւելցունեմ ուրիշ գիտողութիւն մին ալ : Համարելով (բայց ոչ եթէ հաւանելով), թէ Հայ քահանայք պարտական ըլլան հարասակիլ Լատին բարեկարգութեանց, և զիաւուրապէտու այս կանոնիս, միթէ բոլոր աստուածաբանից և կանոնադիսոց վարդապէտութիւնը չէ մի, որ ի գետպ հարիսորութեան, որ և է քահանայ կամց վաւերապէտ արձակում տառ : Իրաւ է, որ այդ հարկաւ օրու թեան գէպքը սովոր են ընդհանրապէս մայն մակուսական գործիք համարիլ, սակայն ինձ կ'երեւի, անբանաւ որ կամ անտեղի բան չէ, թէ որ նմանութեամբ մը, իրեն և ընդուրութեան դեպք համարելու ըլլանը, երկու հազար ուղղափառ ընասնեաց զաստած մնալը, որոնք ոգւուվ չափ գառնացեալ քանի և հինգ տարուան կրած հարզաւատ և գործակից եղողներէն իրաւութիւններ, և անմոց պատճառ և գործակից եղողներէն իրաւութիւնը, կը խորշին խորհուրդներ ընդունեւու այն քահանաներէն, ոյք գործակից թեամբ կամ գէթ ազգեցութեամբ միացած են ազգը և ազգային իրաւունեքը մասնողին հետ, — և չունին ուրիշ կողմանէ այլ հոգեւորական միամիթարութիւնն, բայց եթէ այդ երեսուն և ութից մեծանձնութենէն, հաւասարմութենէն և ի սիրոյն, որոնք որպէս զի այդ ընասնիքները Հռովմէական Սուրբ Ալեռուցն ուղղափառական միութեանը մէջ հաւասարից և հաստատուն պահեն, իրենց պարաք համարեցան անոնցմէ զաստութիւն :

Բայց ամփոփեմք խօսքերնիս : Խափանման վճրութեաբագէս իրեւել ոչնչ ապացուցանելին ետե , ոչ ևս ալ կը զօրէ՝ նչ այդ քահանաները իրենց Ազգին հոգեւորական պաշտամունքէն արդիիելու , ոչ անվաւեր ընելու իրենց եկեղեցական մատակարարութեանց գործերը , և ոչ ալ մատակարարելովնին՝ զիրենք անհանոնութան տակ ձըգելու :

የኅዋዕያ ፩.

Թէ արդիւք Հասման Բրոբականուպի ժողովը ունե՞ր իրաւունք Առաքելական այցելութեան տակ Ճգիռ ի Հոռվմ ընակող Հայազգի Անտոնեան վանականները :

Մենասանաց այցելու թիւնը ոչ միայն իրաւունքը ,
այլ նաև պարագ է , բայց կրօնաստան կարդ աց խրաբան-
չիւր վեհապղն մեծաւորաց միայն իրենց սեփական հը-
նազանգեցելոց վրայ : Գլ . Յիշրամանվեր . Տիրու . Եւ Զժայն .
Դար . Այս այցելու թիւնը երկու եղանակաւ կը ըստ . առվար-
իսն , որ և հայրական կը ըստի , և ոչ սովորական , որ և դաստի-
ականական կամ հայրագիրյական : Զեմ՝ խօսիր սովորականը , վասն
զի մեր գիտուածէն գուրսէ . կը ձառնեմ միայն դաստի-
ականականին վրայ , զոր կ'ու վէր Բրոտականատայն կատարել՝
յանուն Պապին՝ Հայագգի Անտոնեն Լիբանանեցի միան-
ձանց մենաստանին վրայ :

Զինար ինձի որ երկարօքէն հստ մէջ տեղ բերեմ
սրբազն կանոնադիտաց այս խնդրսս փրայօթ ոսհմանա-
դրեալ կանոնները, բաւական է միացն էականը յիշեալ:

բնդ համրական Առաջնորդ մը չէ կարող բապատճենի և կամ հարցախօնի այցելութիւն կատարել, բայց եթէ ելքոր իրեն հանդիսական եղանակու (formalmente) յայնութիւն մը եղած ըլլոց՝ ստորագիտ և հայրական այցելութիւն ընելու ժամանակի, և կամ երբոր վանականաց միոն կամ

բազմաց ծանր յանցանաց նշանաւորութիւննը՝ զինքը սցո
բանիս ստիպէ՛. — բայց յանցանկ կ'ըսեմ, ոչ եթէ՛ երեւ
ւակացեալ ինչ կամ կասկածեալ, հասպա ծանուցեալ և
հասարակաց բերանը հրապարակեալ, և երեւելի գոյ.
թակըսոթիւն մը ձգած կրօնակցացը կամ ժողովրդեան
մշջ (Բանբան. Որպէս և երբ. Տիր. Խր. և Գլ. Երբենին, և
Գործն. Ելեանակի. Տիր. Խր. Հարցադրութ, Յօդ. ԺԲ. — Յուլ.
Կլար. Գիւլ և Գործն. Ելեան. յօդ. Վերջ. ինդ. ի. — Պլ.
Որպէս և երբ. Խր. Զամբառապետութիւնն,) ։

Դարձեալ՝ թէ որ սովորական այցելութեան ժամանակ այցելու Առաջնորդը՝ կրօնաւորաց մէկուն կամ շատին գալունի մէկ ծանր յանցանքը կամ եղեռնագործութիւնը խմնաց, չկրնար ատուլ ալ բարպարական հայրական մասնել, այլ մասնաւանդ թէ ինքը մահացու յանցանաց պարտաւոր կը մնայ, եթէ զայն իրքեւ իւր իրաւասութեան գործ՝ վանական ժողովոյն մասնելու ըլլայ. բայց ուրիշ բան է մէկ կամ աւելի անհանցի ծանրութիւն անհնամել խորհուրդ առնելու համար. (Բէլլից յԱռնեան վանակ. Մա. Ա. պղ. Թ. Գլ. Դ. հայուսած, Ա. 17: — Բայց, Զայր, պղ. Զ. բժ. Պ. կեպ. Ժ. 5: — Գորէս, Շ. Բ. մար. 1.Պ. բժ. 2.Բ. Երիշ. Պ.) :

վերջապէս՝ բապտագիւղն այցելութիւնը կրնաց և
հարկ է որ վերնադդոյն մեծաւորներէն կատարուի իրենց
հապատակեալ վանորէց վրաց, երբոք հռչակեալ յահցանը-
ներ կան, պատճառը հաստրակաց վիասուց, պապիսիք
են, Ա. հերետիկոսական վորդապետութիւն, Բ. արքա-
յալնաս գաւաճանութիւն, Գ. հայհոյտանութիւն, Դ.
հմայարուեսոք և սրբազնն իրաց պղծութիւն, Ե. աւա-
զակութիւն կամ յելուզակութիւն աբբոնի ձանապար-
հաց վրաց, Զ. մարդասպանութիւն, Խ. դրամանենգը, Ը.
սիմոնականութիւն :

Աստվածութեան կերպեւի, որ գառաստանական այցելութեանը ծանր յանցանք մը կ'ենթադրէ, և մանաւանդ թէ չկրնար ձեռք զարնու իլ կամ սպասնացու իշլ բայց եթէ երբոր օրինաւոր եղանակաւ յացնուած կամ հրա-

շակուած ըլլաց այդ վերսիչեալ յանցանքներէն մէ կը , զո՞րո՞նք որբազնն կանոնագիրը կարգաւ . մի առ մի նշանակած են անոնշը Եղեռունք անուանելով : Այս նիւթոյս վրայ ան-բաւ վիշտութիւններ կան յիրաւագրոց , սակայն կարծա-բանութեան համար հետեւեալները միայն յիշեմ . — Գլ-ի հասապ ն . Զներէս . ի Զ . Գիրս , և Գլ . Զգիրս . մի . Զամբարհուածութիւններ : — Գլ . Ա . և կանոն Գալովլ , ժե . Խնդ . Գ : — կան . Յանուածին , Յօր . Յօր . անձին Գլարիսափ , Բ . Խնդ . Ա . — Բնա . Գիրս . Գլշ . Գլ . Զլարնդորժութիւններ : — Գիրս , Ապառածայինն Արցիւնան , ի Քըշ ից , Զպահպանութիւնների իրաց : — Գիրս Բ . Գլ . Զրյանաննէդ : — Բնա . Գիրս , Ու վասն այդ ինչ նը-ապ . Գլ . Զմբարհուածութիւններ :

Միաբան յամենայն կանոնագիտաց վարդապետեալ այս օրէնքները նախակարգելէն եաբը , դժուարին չէ ա-ռաջարկեալ խնդրյան պատասխանել , թէ որ միտ դնելու-ըլլակը պատահած անցքերուն , որոնք առանց ամեննեւին այդ կանոնաց կամնցն իսկ խոհական մոտաց պահանջած պայմանները ունենալու , շարժեցին զիրոբականտայն որ զորբազն Քահանայապետը խարէ և ապօրինաւոր և զրգ-ուելի դաւաճանութեան մը գործի ընէ :

Անոննեանկը , Հայ կղերին զգօն մասին նման , տես-նելով ժողովսւրդ մը որ զիւր հօփիւր կը մէրժէր , խելս-մուտ եզան որ հարկ էր ժողովրդէն չզատուիլ , թէ որ կ'ուզէին զանիկայ ուղղափառ հաւատոց միութեան մէջ պահէլ : Հայկազն ժողովրդեան և կղերին խորհրդոցը քա-ջալէր տուաւ Գաղղիս , պաշտպանն Քրիստոնէից յիրե-ւելու , և ի նպաստ իրենց ձեռնոտու եղաւ և ձեռնոտու է նոյն ինքն Բարձրագայն Դրան կառավարութիւնն : Բայց ընդհակառակն Գեր . Հասուն և Բրոբականտայն մէկի թողլով զժողովուրդը , որ իր հոլուին գլխաւոր մէրժողն էր , իրենց զէնքը կղերին դէմ դարձուցին , և մասնաւո-բավէս վանականաց դէմ , զՊանք շատ ժամանակէ ի վեր իրենց խորհրդոցը հզօրելուց յատիանարարները կը հա-մարէին :

1867 տարիէն ի վեր Բրոբականտայի մէջ դատաս-

տան մը բացուած էր Անտիպրայ արքեպիսկոպոս և Անտան-եանց Ընդհանրական Աքբայ՝ Գագանձեան Գեր , Սուքիս-սայ գէմ , և բովանդակ իսկ այդ կարգին : Սակայն եթէ Աքբայն և եթէ վանականը անմեղ եւան Հասունին ստա-յութ ամբաստանութիւններէն : Որ և իցէ անաչառ և բա-րեիսկ դատաւոր՝ պէտք էր որ պատժէր այն չարակեզու-զրաբարտողը . սակայն Բրոբականտայն , որ անոր ընկերա-կողն էր , այդ արդարութեան գործը չկատարելով , անի-կայ ընդհակառակն ալ աւելի գոռողացաւ . և լցաւ կատա-զութեամբ :

Հայկական սիւնհոգուսին մէջ , որ անցեալ տարի ի Կոստանդնուպօլիս գումարեցաւ , Գեր . Հասունը ամենայն ջանկը ի գործ դրաւ , որ Անտոնիեանները և ուրիշ Հայ վա-նականները գերութեան կապերու տակ ձգէ , բայց չյա-ջողէցաւ :

Վրաց հասաւ տիեզերական ժողովը , փորձաքար ա-մենուն , դատաւոր և անաչառ պաշտպան՝ ի բռնութե-նէ և ի չարութենէ նեղուած անմեղութեան , անընդզի-մադրելի պատճահար անօրինաց , որ կեկեցւոցն Աղդաց պատիւը և ապաւոր և ապահովութիւնը կորստեան վտանգի մէջ կը դնէն :

Մի միայն յարմար ժամանակ էր այդպիսի պատկա-ռելի Անեանի տաջեւ հանել գատնացեալ ժողովրդեան գանգանանները իրաւաբանօրէն , և կանոնական ձեւալ ինպէւել հասարակաց խաղաղութեան աւերովին պաշտօն-ընկեցութիւնը , և ապային իրաւանց վերահաստատու-թիւնն և ամբողջութիւնը : — Աղդին մեծամեծները խե-լամուտ եղան առ ժամանակ մի այս յարմար առթին . բայց վերջը (չգիտուիր թէ ինչո՞ւ) պաղեցան անկէ , և այնպէս իրենց բովանդակը վակուած միացին տիեզերա-կան գահձին դաները : Է՛ս , եթէ վեհանձեան թեամբ և հասաւասանութեամբ կատարած ըլլային զայս ի ժամա-նակին , աւելի արագ և աւելի յաղթական և զանակա-դործերը ի լաւագոյն փոխուած կը ըլլային , և այդպէս իրսիստանօր գլուխ ի վեր չեին վերցունէր յանդդնու-

թիւնը, անասպօրինաւորութիւնը և բահաւթիւնը. առ կայն ասոր վրաց առիթ պիտի ունենամ. լ. Գլխոյն մէջ խօսիլ:

Դասնամք Անսոնեանց, Բրոբականտայի և Հասունին զայրացումը ալ աւելի բրոբքեցաւ, երբոր իմացան որ գեր. Պազանձեանը ուրիշ Գաղղիացի Եպիփապոսաց հետ միաբանել է անտառը-թեան գէմ. այս ըստը բաւական եղաւ, առանց ինչ դատաստանի, անոր Աբրայական պատուեն և Անսարքայ արքեպիփոպոսութենէն անկման վը-ձիւը տալ, և ի լումն ասօրինաւորութեան, իր անունը Հոռվայ Քրտակն (*). մէջ անպատճ և նախատական կերպիւ հրատարակել, պարզ եպիփոպոս մը նշանակելով՝ առանց տիտղոսի մը և առանց ամոռոց:

Ետքը Բրոբականտայն, հզօր նեցուեկ Հասունին իրեն արբանելին, զգեր. Բլիշիմ՝ Տիանու արքեպիփոսը Պապին կողմանէ առաքելական այցելու կարգեց Անտոնիանց վանական կարգին, Հանդերձ կարողութեամբ զուրիշ մը իրեն տեղը փախանորդ անուաներու (Կոնդ. Առաք. 24 գետր. 1870), անիկայ ալ իրօր իրեն տեղը բառափնիւ (չարչարազքեաց) բառած կրօնաւորներէն մէկը դրաւ. չ. Խոնասիս անուան. բայց նա ձանչնալով առ բուած պաշտօնին գժուարութիւնը և ասօրինաւորութիւնը՝ հրաժարեցաւ. խոկ երբօր գեր. Բլիշիմ՝ կոստանդնուպօլիսի Հայազգի ժողովրդեան և կղերին անհանդար տութեանց պատճառաւ. հրաման ընդունեցաւ անդր երթարու, Բրոբականտայն որ միշտ յօժարեալ էր գեր. Հասունին մէքենայութիւններուն ձեռք տալ, այնչափ ըրբաւ որ ստիպեց զբարեմիտ Պապը՝ գեր. Անտոն Մ. Վալենցիանի, Փարբիանու և Մատելիացի Եպիփոպոսը առաքելական այցելու զրկել Անտոնեանց վրաց, միտնդամայն կարողութիւն տալով դատաստանական օրինօք վարուելու.

(*) Քրտակ (cracas) կրտակ այն ցուցակ գերբը, որ տարուե տարի կը հարաստակէ Հառլից՝ բարը Կաթոլիկ եկեղեցւոյ երեւելի եկեղեցական պատճառական անունները, հանդերձ իրեն տիտղուներով և պաշտօնամթիւ:

թէ այդ վանականաց հետ և թէ որ և է գիմադրողաց հետ, թէպէտ և Եպիփոպոսնան կամ Արքափիս իպրոպանան աստիճանաւ ալ Ճիմայեալ ըլլան. (Կոնդ. Առաք. 5 ապրիլ, 1870):

Նցն միջային Բրոբականտայն ուրիշ բռնութիւններ ալ կը բանեցաներ Անսոնեանց վրաց, որոնք ամենեւնն առ ոչինչ համարելով գեր. Բիշիմին և Բասիկոնիստ արեղային ազգաբարութիւնները, կը մերժէին այդ պարբիսաւոր բասարութիւններին այցելու թիւնը, որուն ներքեւ ծածկուած էր իրենց միաբանական կարգին հանդիսական քակատումը: Մարտ ամսուն 25 ին իրենց ազգաբարութիւններուն էր ըլլալու այցելու թեանը, և յաջորդ օրը՝ Բրոբականտայն զէ Սերովիէ Հանրմեանը՝ Հռովմաց մենաստանին վանահայրը և բոլոր կարգին միւս պաշտօնակառները, իրենց պաշտօններէն ձգելն եաբը (սր իրաւամբը), Հրամայեց միաբանութեան թէ անձն, թէ ինչք, թէ ըստացուածը՝ բոլորը առաքելական այցելու ին ձեռքը աւանդեւ: Եւ որպէս զի գեր. Հասունին կատալութեանը արժանի ճարակ տայ, հրամայեց որ Պազանձեան արքեպիփոսուոր և Հանրմեան վանահայրը վակարական էր իրաւամբը (սր իրաւամբը), Հրամայեց միաբանի վանահայրը թողուն վահերերնին և երթան վակարական, մինչեւ ի նոր Հրաման, մէ կը սրբացն Սարինայի վանքը, և միւսոր ի տուրբն Բանալինաստրա ի Բոլիբիթերա: Սմենայն միանձուներն միաբան պատասխանեցին Բրոբականտայի այդ հրամանին դէմ թէ իրենց անյանց և իրենց առաջնորդին անմշշ-թեանը գրայ անիղու միա ունեալը, չն նորու որ իրենց գրին յափլահուին, բայց եթե իրենց անձնուած բակալաւր նախ ողունիի ընել պատը:

Բայց Աստուած որ անմեղին պաշտօպանութեանը կը հոկէ, նցն օրը ի Յարձարագյն Դրամնէ Խալիսյ արքունեաց քով Խրկուած դեսպանը ի Հռովմայունել տաւաւ: Այս գեսպանը անմիջապէս բոլոր բար թէ իւր պետութեան հպատակները անբռնաբարելի են: Եցնապէս այդ բանին օդնութեանը դիմեց նաև Պազանձեաց ու գեսպանը, իրեն թիկունը անենալով կափսկապասաց Խրծը ին մեծագոյն մասին զայրացումը, մասնաւանդ Պազանձեաց ուց, այնպէս որ Յամանեան պետաթեան դեսպանը կըր-

ցաւ սոստիկանութեան զինուորները արգելուլ, որ եկեղեցական բարեկարգութիւնը չեղծանեն՝ վանքի մը որմանցը մէջ մտնելով, որ անմերձենալի ըլլալուն իրաւունքն ուներ ի կանոնական օրինաց հրամայեալ:

Բայց ի Հռովմ ամենայն ինչ ներեւալ: Այդ սրբազան դատաստանաւեղիները իրենց գործոց տարացցց չեն առնուր այն սրբազան կանոնները, որոց կ'ուղեն որ իրենց մէջ գուրս աշխարհ ամեն հնապանդի: Եւ յիրաւի ուր ըլլանաւ անուած է, եթէ ոչ ի Հռովմ, որ հասարակաց փողոցի մէջ պատկառելի ալեզարդ արքեպիսկոպոս մը (Գեր. Յակոբոս Պատիարքեան, արքեպիսկոպոս Տիգրանակերասի) Պապին սստիկանաց և զինուորացը հետ կը ռուի, իր ընդհանուր փոխանորդը և աստուածաբանը Գեր. Հասունի կաշառեալ բռնագրաւութենէն կորպէլու համար, որ իր պատուհանը ելած սիրար ճիսարալ համուի ստուես կը ըլլար այդ գայթակլական տեսարաննին: — Յարեաղդաբար Մահմետական լուսինն ու աստողը բարեյրդոր գտնուեցան Լիբանաննեցի Անտոնիեան վանականց, քան թէ Պետրոսեան բանալիները:

Քրոքականուայն անհնարութեան մէջ ինհարով օտար պետութեան հպատակաց դպչելու, շուտով մը հոգեւուրական բռնութեանց դարձաւ, որոնց ալ ձեռնհաս չ'էին աշխարհավարական միջնորդութիւնները: Սակայն մաքէ չ'անցուց որ օտար պետութեան վրայ բանեցուցած բռնութեան մէջ կուներէլու, թէպէտե հոգեւորական կերպարանաց մացուի, բայց օտար հպատակ անձի և ընչելց և ստացուածոց դէմ բռնութիւն սեպաւելէն չեն դադրիր: Գեր. Հասուն, որ Անտոնիեանց կարգը՝ վանական ըլլալուն համար բնաջինն վերցունելու կ'եռացը, միաբանեցաւ Բրուբականուայի հետ զանոնք կանոնական պատժավք ընկճելու. և այս պատժոց օրինաւ որ կերպարանք մը տալու համար, յանուն Պապին՝ զրկուած առաքելական այցելուի մը ձեռաք խորհեցան հրամայել զանոնք: Խըսանութեան գեղծաւմը չխորշեցաւ այդ մէքենայեալ վրեժ ֆնդրութենէն և Գեր. Վալէնցիանի յօժարութեանը:

յանձնաւու եղաւ օգնական ըլլալու ասոր, (Հրամա. 1870 տպէլ 28):

Մինչեւ հս բերաւ զիեղ պատմութիւնը բայց թէ անոնցմէ ինչ ապօրինաւոր հետեւակըներ առաջ եկան, ի. խնդիրը խօսել ասց պիտի մեղի: Առ այժմ կենամք հս և առաջարկուած ինդիրյն պատասխանը տամբ:

Ինքնին ասոնց անընդգիմագրելի պատասխանը բաւական արուած կ'ըլլայ, եթէ նախակարգեալ կանոնական սկզբունքներուն համեմատելու ըլլամք այդ եղած ներուն պարագայները:

Սակայն նաեւ չնորհերով, անընդունելի ենթագրութեամբ, որ Բրոքականուայն կանոնական կերպիւ իրաւասութիւն ունենար Լիբանանեցի Անտոնիեանց, և անոնց ընդհանրական Արքային Անտիքայ արքեպիսկոպոսին վրայ, — Միարանութեան մը, կ'ըսեմ, որ ոչ ագգութեամբ և ծիսիւ արեւմուեան պատրիարքութեան կը վերաբերի, և ոչ ալքազարական հպատակութեամբ Պապին թագաւորութեանը, թէպէտե անոր ակրութեան սահմաններուն մէջ կը բնակէր, — սակայն կ'ըսեմ և կը պնդէմ, որ ոչ Բրոքականուայն և ոչ Պապը կընային անոնց վրայ՝ ըստ կանոնական օրինի՝ առաքելական այցելու դրկել, որ ոչ ալ ինչ ըսելէ, բայց եթէ հացաքաննական ստենի (inquisitione) բարականական այցելութեանը մատնել:

Եւ յիրաւի ուր է հս կանոնագրոց կարգու նշանակած մերի յանցանքներէն գոնէ մէկը. վասն զի այդ յանցանքներէն զատ չէր կրնար ուրիշ որ և լցէ պատճու այդ այցելութեան իրաւունք տալ:

Առաքելական կոնդակը, որ նախ Գեր. Բիշյումին, ետքը Գեր. Վալէնցիանի իշխանութիւն կուտար այցելութեան, ինչ պատճառ յառաջ կը բերէ. — զայս թէ կոստանդնուպոլիս բնակող Լիբանանեցի Անտոնիեան վանականներէն շատերը, (տարը հոգիէն աւելի չէին), հոն տեղի չա կը բնակին և ժաղավորէան հետ մատանշան Գեր. Հասունի իրենց օբյաւոր Պատրիարքին գէմ գլուխ վլուունելու: (Օբյաւոր բարիդ վրայ ետքը պիտի խօսիմք): — Ա-

Հաւասիկ միա՞ն ցուցուցած պատճառը , որ ոչ սրբազն կանոնադէաներէն մի առ մի նշանակուածներուն մէջ կը գտնեմք , ինչպէս վերը տեսանք , — և ոչ ալ ի Հռովմք բնակող Անտոնեանց վրայ կը ճշմարտեմք՝ ուղիղ տրամադանութեան ամենէն հասարակ սիրութերովն ալ : Զի եթէ արդարեւ ի կոստանդնուպօլիս բնակողները աղդային կուսակցութեան և անոր գործոցը հետ միաբանեցան և կամ որ և ից յանցանք ալ թէ գործեցին , ինչու բարձրագույնանու այցելութեան տակ ովտի ինտան ի Հռովմք բնակողները : Թերեւս դաւակցութեան կասկած մը ըլլալուն համար վրաննին . — բայց ուղիղ խելքը մեզիկուսուցանէ որ յանցանքի մը կամկածը՝ փաստ չէ յանցանքի մը ըլլալուն . և ի վեր անդր նախագիտելեաց մէջ մի առմի համրուած էին այն յանցանաց տեսակները , ոյք կը նաև իրաւունք տալ վանական միաբանութեան մը վրայ դատաւորական այցելութիւն ընելրւ :

